## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Գիսավորների անսովոր տեսքը, նրանց խորհրդավոր լույսն ու դիտվող փոփոխությունները ամենավաղ ժամանակներից այդ օբյեկտները դարձրել են համընդհանուր ուշադրության առարկա: Դրանց վերագրվել են բազմաթիվ, հիմնականում գուժաբեր, հատկություններ, համարվում էր, որ դրանք ազդում են ժողովուրդների և պետությունների, ինչպես նաև առանձին անհատների ճակատագրերի վրա: Օրինակ, համարվում էր, որ հենց 590 թվականին հայտնված գիսավորն էր բռնկված ահավոր ժանտախտի պատճառը: Չցանկանալով համակերպվել 1664 թվականի գիսավորի հայտնության հետ, որն աստղագուշակների պնդմամբ ոչ մի լավ բան չէր խոստանում, պորտուգալական Ալֆոնս 6-րդ թագավորը փորձում էր նրան հալածել ատրճանակի կրակոցներով:*